ԱՐՄԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ
ՎԻՐՏՈՒԱԼ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՄԱՏՐԻՑԱՆ

ԱՐՄԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՄԱՏՐԻՑԱՆ

ԳՅՈՒՄՐԻ

2023

Մենագրությունը հրատարակության է երաշխավորել՝

Աշխարհաժողովի նախաձեռնող խումբը

Գիտական ղեկավար՝ աշխարհագրական գտությունների թեկնածու, դոցենտ՝ Արմեն Ներսիսյան

Գրախոս՝

Մինասյան Ա.

Հայաստանի անվտանգային համակարգի նպատակային մատրիցան

/Ա. Մինասյան, 12 էջ/:

Մենագրությունը՝ ԱԿՎԱ-ի (Ազգային կառավարիչների վիրտուալ ակադեմիայի) առաջին՝ ազգընկալ մակարդակի պաշտպանիչ թեզն է:

Մենագրության նպատակն է վերլուծել և հասկանալ Հայաստանում անվտանգային համակարգի արդիականացման նպատակներն ու հիմնական ուղղությունները, որոնք անհրաժեշտություն են համարվում հատկապես մեր տարածաշրջանում ստեղծված բարդ ռազմաքաղաքական իրավիճակի պայմաններում: Իսկ Ազգային պետության հիմնադրման պարգայում, որպես տարածաշրջանում քաղաքակրթական հաղորդակցիչ անհրաժեշտություն է դառնում նոր ու կենսունակ անվտանգային համակարգով նախ սեփական, ապա քաղաքակրթական դաշնակիցների հետ ձևավորել ապագա Արդար աշխարհակարգի հիմքերը, որն էլ ռեալ հիմք կապահովի հաղթահարելու ժամանակակից քաղաքակրթական և համընդհանուր ճգնաժամը:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ինչպես ակադեմիական ոլորտում, այնպես էլ՝ հասարակական գործընթացների պլանավորման պրակտիկ տիրություն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 4

Հայաստանի անվտանգության համակարգը որպես ապագա արդար աշխարհակարգի առաջնային օղակ 5

Հայաստանի ապագա անվտանգային համակարգի ճարտարապետումը..8

Վերջաբան 11

Ծանոթագրություններ 12

ՆԱԽԱԲԱՆ

Անվտանգություն ասելով շատերը հասկանում են միայն զինված ուժեր, զինտեխնիկա, ռազմական սարքավորումներ և այլն: Ակայն անվտանգությունը լայն իմաստ ունի և չի սահմանափակվում միայն զինված ուժերով և թվաքանակով: Այն վերաբերվում է բոլոր ոլորտներին: Ազգային պետություն անվտանգային հիմնադրույթների հռչակումը նպատակ ունի հստակ փաստել հայ տեսակի համակեցության վերաբերմունքը Նոր Աշխարհակարգի ձևավորման գործընթացներին, հստակ մատնանշել Նոր Աշխարհակարգի քարտեզագրման արդյունքում ակնկալվող հավակնությունները: Սա թույլ կտա բացահայտել մեր բնական դաշնակիցներին և վերջիններիս հետ շահերի համադրմամբ նպատակային աշխատանքն ապահովելու է ազգային պետության հիմքերը: Անվտանգության համակարգում շատ կարևոր է որ բոլոր օղակները փոխլրացնեն միմյանց: Յուրաքանչյուր օղակի թեկուզ աննշան թերացումը կարող է հանգեցնել անվտանգային բալանսի խախտմանը:

Վերնոշյալը փաստում է հետազոտության արդիականությունը, և ընդհանրացնում նպատակը, որն է սահմանել Հայաստանի անվտանգային համակարգի մատրիցան:

Հետազոտության ընթացքում, որպես հետազոտական խնդիր սահմանվել է.

- Ներկայացնել Հայաստանի անվտանգության համակարգը որպես ապագա արդար աշխարհակարգի առաջնային օղակ,
- Առաջարկել անվտանգությունն ապահովող պաշտպանական համակարգ,
- Բացահայտել Հայաստանի ապագա անվտանգային համակարգի ճարտարապետման անհրաժեշտությունը:

Հետազոտության ընթացքում օգտվել ենք անալիզի, սինթեզի, տեսական ընդհանրացման և այլ մեթոդներից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ԱՊԱԳԱ ԱՐԴԱՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՕՂԱԿ

Ժամանակակից աշխարհը գտնվում է քաղաքակրթական խորը համակարգային և համընդհանուր ճգնաժամի մեջ որը պայմանավորված է քաղաքակրթությունների կյանքի հերթական փուլի իրացման ավարտուն ընթացքով: Արհեստական բանականությունը, նորագույն տեխնոլոգիաները, թվայնացումը, նոր հնարավորություններ են բացում մարդկության համար: Սակայն ցանկացած գործիք կարող է օգտագործվել և՛ բարի, և՛ չար նպատակներով: Հայաստանը վերածվել է հստակ փորձադաշտի, որը կարող է շատ աղետալի հետևանքներ ունենալ: Վառ օրինակ էր 2020թ. նոյեմբերի 9-ի կապիտուլյացիան, որի միջոցով քանդվեց ազգային դիմադրողականությունը: Բայց այս ամենը նոր հնարավորություններ է ընձեռում, որոնց միջոցով կարելի է գտնել լուծման ուղիներ և հաղթահարել ճգնաժամը:

Հայկական ազգային պետությունը երաշխավոր է կանգնելու՝

1. Համամարդկային քաղաքակրթության բազմազանության պահպանմանը,
2. Մարդկության սոցիալ-բնական կենսազարգացմանը,
3. Ապագա Աշխարհակարգի հաստատման հիմքում Արարչական սկզբունքի և արդարության ներդրմանը,
4. Դաշնակիցների հետ լիարժեք կենսագործունեությանը:

Հետևաբար հայկական ազգային հզոր պետության գոյությամբ պետք է սահմանվի նրա հստակ պետքականությունը և առաքելությունը ապագա Աշխարհակարգի ձևավորման բոլոր հարթություններում: Ըստ այդմ հայկական ազգային պետության անվտանգության հիմքերը կառուցվելու են եռաչափ տրամաբանությամբ:

1. Միկրո մակարդակ (ամրոց-պետություն)

Ուժեղ պետականության նոր մոդելի ներդրում: Սա քաղաքակրթական հիմքով պետության նոր տիպ է ապահովելու սեփական տեսակի կենսագործունեությանը և դիմակայելու է մարտահրավերներին: Նոր Աշխարհակարգի ձևավորումը ապահովող գործընթացներում ամրոց-պետությունները դառնալու են հզոր դիմակայող քաղաքակրթական դարպասներ և ժառանգականություն փոխանցող կամուրջներ: Ամրոց-պետության մոդելը կառուցվելու է բերդ-համայնք սկզբունքի վրա որտեղ համայնքային մակարդակով

ինքնակազմակերպումը և ինքնակառավարումը ապահովելու է ինքնաբավ համայնք։ Հայաստանի կողմից նման պետության ձևավորումը բխում է մեր տեսակի կենսական անհրաժեշտությունից։

2. Մեզոմակարդակ-միջին Արևելք-ընդհանուր տուն

Այս մակարդակում անվտանգության հայեցակարգը պետք է կառուցվի տարածաշրջանների ավտոխտոն ժողովուրդների սոցիալ-բնական համագործակցությունը ապահովող անվտանգային առաջնահերթությամբ։ Այս մակարդակում կարևորվում է տարածաշրջանի քոչվոր ցեղերի էքսպանսիոն հավակնությունների չեզոքացումը։ Հետևաբար ապագա Աշխարհակարգի հիմքը պետք է կազմեն քաղաքակրթական անվտանգության տարածաշրջանային գոտիները։ Նմանատիպ քաղաքակրթական անվտանգության արեալի կարգավիճակի կարող է և պետք է հավակնի միջին Արևելքը, որը համարվում է ավտոխտոն ժողովուրդների ընդհանուր տուն։ Նման միջավայրը հնարավորություն կտա բնիկ ժողովուրդներին լիարժեք կենսագործել։ Հետևաբար, միջին-Արևելք-ընդհանուր տուն անվտանգային հայեցակարգը լիարժեք ներդաշնակում է և՝ տարածաշրջանի ավտոխտոն ժողովուրդների, և՝ աշխարհաքաղաքական գլխավոր գերակատարների շահերը։ Այս պատմական պատասխանատվությունը իրենց վրա կրելու են հայկական և իրանական պետությունները որոնք ունեն շատ, սերտ բարեկամական հարաբերություններ։ Այսպիսով տարածաշրջանային մակարդակով նույնպես հայկական ազգային պետության գոյությունը և հզորությունը դառնում է անփոխարինելի երաշխավոր ապագա Աշխարհակարգի հաստատման գործընթացում։

3. Մակրոմակարդակ-քաղաքակրթական Աշխարհակարգ

Մակրոմակարդակում միջազգային անվտանգության համակարգը պետք է կառուցվի բոլորովին նոր հիմքի վրա, որտեղ առանցքայինը մարդկային էութենականության ապահովումն է։ Հետևաբար ապագա Աշխարհակարգը իր բնույթով պետք է լինի քաղաքակրթական։ Նախ անհրաժեշտ է արմատապես փոխել ներկա Աշխարհակարգի ճգնաժամ ապրող այն բաղադրիչները, որոնց էությունը հանդիսանում է ճգնաժամի պատճառ։ Մինչև այժմ միջազգային անվտանգության ստատուս-քվոն ապահովում էր ուժային կենտրոնների միջև ազդեցության գոտիների բաշխմամբ։ Այսինքն նեոգաղութային հաստատված համակարգը բնորոշվում է նեոկայսրությունների միջև ձևավորված փոխհարաբերություններով։ Քաղաքակրթական տարածաշրջանային

գոտիների բնական դաշնակցության հիմքով ձևավորվելու է ապագա Աշխարհակարգի Մակրոմակարդակը։ Այն հնարավոր է պատասխանատու ակտորների դերակատարմամբ որոնք կգիտակցեն իրենց առջև դրած պատասխանատվությունը։ Ամփոփելով աշխարհա-քաղաքական կառուցվածքի ճարտարապետումը, այն կարող ենք ներկայացնել պատկերավոր ձևակերպմամբ։ Հին Աշխարհակարգի փլուզումը արտահայտվում է ապարժեքային անմարդկային քաոսով՝ ջրհեղեղով։ Փրկության միակ պայմանը տապանի կառուցումն է։ Տապանի կառուցումը ունի և փոխաբերական և ուղիղ իմաստ։ Փոխաբերական իմաստով, աստվածաշնչյան տրամաբանության համապատասխան, երբ արժեքային քաոսը ջրհեղեղը քշում տանում է ցանկացած աստվածային արժեք, միայն պաշտպանիչ միջոցը տապան էր, որը ստեղծել էր Նոյը։ Ինչ վերաբերում է տապանի կառուցման ուղիղ իմաստին, ապա այն ունի հստակ բանաձև՝ քաղաքակրթական հիմքով ազգային պետությունների ձևավորում բերդ-համայնք, ամրոց-պետություն հստակ բանաձևով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒՄԸ

Մենք շատ լավ հասկանում ենք, որ պետությանը պաշտպանում է բանակը: Այդ մասին գիտեն նաև սահմանամերձ գյուղերի բնակիչները, դա գիտի նաև հակառակորդը: Հնարավոր է, որ թշնամին կարողանա շրջանցել գործող պաշտպանական շերտը, ապա այդ դեպքում սահմանամերձ գոտու անզեն ու անպաշտպան բնակիչը կհայտնվի վտանգի տակ: Մեր կողմից առաջարկվող լուծումը հետևյալն է, սահմանամերձ տարածքներում ստեղծել պաշտպանական այնպիսի համակարգ, որում այդ տարածքի բնակիչը դառնա պաշտպանական համակարգի ակտիվ մասնակից: Ընդ որում դա պետք է իրականացվի կամավոր սկզբունքով, իսկ կամավորության համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք այդ մասնակցությունը կդարձնեն նպատակային: Գնալով այս ճանապարհով, մենք կկարողանանք լուծել շատ կարևոր հոգեբանական խնդիր, ինչպիսին է՝ ես եմ պաշտպանում ին տունը: Յուրաքանչյուրի հոգում տունը նույնացնելը երկրի հետ, այն մատուցվում է որպես արարչական պատգամ: Ի՞նչ անել և ինչպե՞ս:

Սահմանամերձ գոտիներում պետք է.

- ստեղծել անվտանգության այնպիսի համակարգ որի պարագայում բնակիչը իրեն համարի պաշտպանված,
- ստեղծել սոցիալական այնպիսի պայմաններ, որոնք այդ գոտիները կդարձնեն գրավիչ ապրելու և տնտեսական գործունեություն իրականացնելու համար:

Նախատեսվող համակարգի նկարագիրը

Նախատեսվող համակարգում գործող ուժային կառույցները, բնակավայրերում կամավորական զորական միավորումները, իսկ նախատեսվող համակարգի հիմնական տարրը բնակավայրերի նոր տիպի շղթայի ձևավորումն է: Պայմանականորեն այդ բնակավայրերը մենք անվանում ենք բազա-բնակավայրեր:

Բազա-բնակավայրը համայնք է, որի բնակիչները պաշտպանական համակարգերի կադրային բազայում հաշվառված են որպես աշխարհազորայիններ՝ անկախ իրենց մասնագիտությունից: Բազա-բնակավայրերում ստեղծված աշխարհազորայինները ընդգրկվելու են ՀՀ

պաշտպանական համակարգի այն զորամիավորումներում, որոնք գործում են սահմանամերձ գոտու տվյալ հատվածում։

ՀՀ ԶՈՒ ԳՇ-ն ստեղծելու է մշտական 20-օրյա ուսումնական զորավարժությունների համակարգ։ Զուգահեռ պետք է ստեղծվեն մասնագիտացված ռազմական զորամիավորումներ, և գործող բանակը այս դեպքում դառնում է արդիական, իսկ ստորաբաժանումների թվակազմը ենթադրում է 10-15000 մարդ։ Պարետը ղեկավարում է բազայի անվտանգության ապահովման միջոցառումները։

Բազա-բնակավայրերում տնտեսության կառավարումը

Սահմանամերձ գոտու բնակավայրերում՝ բազա-բնակավայրերում պետք է նախատեսել և ապահովել բնակիչների 100% զբաղվածություն։ Դրա համար պետական կարիքների բավարարման հետ կապված գյուղմթերքի, սննդամթերքի, հագուստի և կենցաղային նշանակության իրերի մատակարարումներ պետք է կազմակերպել ու իրականացնել՝ օգտագործելով սահմանամերձ բնակավայրերի մարդկային ու արտադրական միջոցները։

- Պետական կառավարման համակարգում պետք է ստեղծվի պետական պատվերի ձևավորման լիազոր մարմին, որը իրականացնելու է բազա-բնակավայրերից մատակարարումների պլանավորումը։
- Դրա համար բազա-բնակավայրերում աշխարհազորային-բնակիչների կողմից ստեղծվում են իրավաբանական անձի կարգավիճակով կառույցներ, հետագայում հիմնադրամներ, որոնց տրվում է ՀՀ պետական պատվեր կատարող սուբյեկտի կարգավիճակ։
- Հիմնադրամները բնակավայրերում ստեղծելու են գյուղատնտեսական մթերքների ընդունման կետեր։ Հիմնադրամները գյուղատնտեսական մթերքների արտադրության ու գնման պայմանագրեր են կնքում բազա-բնակավայրեր բնակիչների հետ, որոնցով պատվիրված գյուղատնտեսական մթերքները գնում ու պահեստավորում են իրենց ստեղծած ընդունման կետերում։

Հիմնադրամները, որպես բազա-բնակավայրի բնակիչների բիզնես միավորում, խթանելու են բազա-բնակավայրերում գյուղատնտեսական կոոպերատիվներին։

Բազա-բնակավայրերում ապրելու և ներդրումների գրավչության ապահովումը

- Բազա-բնակավայրերի բնակիչները և նրանց ընտանիքների անդամները պետք է ստանան անվճար բժշկական ապահովագրություն, բազա-բնակավայրում ապրած տարիները պետք է համարվեն ստաժ: Իսկ բազայում ապրած 1 տարին պետք է հավասարեցված լինի սովորական բնակավայրերում ապրած 1,5 տարվա հետ:
- Բազա-բնակավայրերում բնակվելու ցանկություն հայտնող քաղաքացիներին անհատույց հատկացվելու են բնակարաններ:
- Բազա-բնակավայրերի տարածքները պետք է լինեն ԱԱՀ-ից ազատված առևտրի և բիզնեսի գոտիներ:
- Բազա-բնակավայրերում առանձնահատուկ ուշադրություն է անհրաժեշտ գյուղական մտավորականության ձևավորման խնդիրների հանդեպ: Մասնավորապես, դա վերաբերվում է այդ տարածքներում գործող դպրոցների ուսուցիչներին նյութական բարիքներով ապահովելուն:

ՎԵՐՋԱԲԱՆ

Մենագրության մեջ կատարված հետազոտության արդյունքները կարելի է ներկայացնել ներքոհիշյալ եզրակացությունների ու առաջարկությունների տեսքով:

1. Հայաստանում ռազմականացումը և ռազմական արդիականացումը համարվում է անհրաժեշտություն և կարևոր նախապայման առկա իրավիճակի հաղթահարման համար:
2. Հայաստանում ռազմական և անվտանգային համակարգի նորովի արդիականացումը հնարավորություններ է տալիս ձևավորել կուռ համակարգեր, որոնք ի զորու կլինեն դիմագրավելու առկա մարտահրավերներին:
3. Առաջարկվող նախագծով Հայաստանում ռազմական անվտանգային համակարգում լուրջ դերակատարում կարող են և պետք է ունենան նաև Հայաստանում ապրող մեր հայրենակիցները, որով ըստ էության յուրաքանչյուր քաղաքացու տրվում է պաշտպանական համակարգում ակտիվ դերակատարման հնարավորություն:
4. Այս ամենով հանդերձ նոր ձևավորվող համակարգի հիմնական խնդիրը պետք է դառնա ապագայի հզոր երկիր կառուցող նոր տիպի քաղաքացու ձևավորումը, և նախագծում ընդգրկված համայնքներում պետք է ներդրվեն կրթական և դաստիարակչական այնպիսի մոդելներ, որոնք ձևավորելու են վաղվա պաշտպանված ու ապահովված համակարգի պահանջներին բավարարող քաղաքացիներ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Մենագրություններ, ուսումնասիրություններ

1. Մարգարյան Մ., «Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում», Երևան, «Պետական ծառայություն» հրատարակչություն, 2019թ., 313 էջ:
2. Նեսիսյան Ա., «Աշխարհաժողովի կողմից անվտանգային հիմնադրույթների հռչակում», 13 էջ:
3. Ներսիսյան Ա., «Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության սահմանամերձ գոտիները երաշխավորված անվտանգությամբ գոտիների վերածելու հայեցակարգ», 6 էջ:
4. Ներսիսյան Ա., «Հայկական քաղաքակրթության հայտը նոր աշխարհակարգի հաստատման գործընթացում», 8 էջ:
5. Ներսիսյան Ա., «ՀՀ-ին սպառնացող ժողովրդագրական աղետ: Մարտահրավերներ, հեռանկարներ», 12 էջ:
6. Ներսիսյան Ա., Մակարյան Է., «Արարչական կենսականոնագիր», Գյումրի, Հեղինակային հրատարակություն, 2022թ., 245 էջ:
7. Ներսիսյան Ա., Մակարյան Է., «Հոգևոր Էակ–Deus Homo» (Արարչականություն՝ Պատմության ավարտ), «Վերադարձ Ապագա» (Հայկական քաղաքակրթության կենսընթացը), Գյումրի, 2023թ., 200 էջ:
8. Վալեսյան Ա., Վալեսյան Լ., «Քաղաքական աշխարհագրություն», Երևան, Երևանի Համալսարանի հրատարակչություն, 2005, 340 էջ:

Բ. Էլեկտրոնային աղբյուրներ

1. www.arjeq.am [հասանելի առ՝ 19.08.2023թ.]:
2. www.artsakhlib.am [հասանելի՝ առ 07.08.2023թ.]:
3. www.dzen.ru [հասանելի՝ առ 31.08.2023թ.]:
4. www.encyclopedia.am [հասանելի՝ առ 28.08.2023թ.]:
5. www.ijevanlib.ysu.am [հասանելի՝ առ 05.08.2023թ.]:
6. www.nt.am [հասանելի ՝ առ 17.08.2023թ.]:
7. www.shsu.am [հասանելի՝ առ 30.08.2023թ.]:
8. www.youtube.com [հասանելի՝ առ 15.08.2023թ.]:

ԱՐՄԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆ

Ծնվել է 05.11.2003թ գյուղ Փոքր Սեպասարում: 2021թ ավարտել է Մեծ Սեպասարի միջնակարգ դպրոցը:2021թ ընդունվել է Շիրակի պետական համալսարանի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի սերվիս բաժին:Սկսած 2022թ-ից Ազգային Կառավարիչների Վիրտուալ Ակադեմիա-ի ազգընկալ մակարդակի հետազոտող:Գիտական հետազոտությունների բնագավառն է Ռազմականացումը և դրա անհրաժեշտությունը որպես առկա մարտահրավերների լուծման ուղի: Հետազոտական հիմնական ուղղությունն է Ռազմականացումը որպես ազգային անվտանգության նախապայման:Հեղինակն է 1 գիտական հոդվածի: